Ե՞ՐԲ է տեղի ունենալու Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՍԵՄԻՆԱՐԻԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

Դուք երբևէ մտածե՞լ եք, թե երբ է տեղի ունենալու Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը, կամ՝ արդյոք դուք պատրաստ եք դրան: Թեսաղոնիկեցի Սրբերը ունեին նմանատիպ հարցեր:

Կարդացեք Ա Թեսաղոնիկեցիս 5.1-3 հատվածները և փնտրեք, թե Պողոսն ինչպիսի փոխաբերություններ էր օգտագործում՝ Հիսուսի վերադարձը նկարագրելու համար:

- Դուք ի՞նչ գտաք:

- Պողոսի՝ գիշերվա գողի և ծննդաբերող կնոջ մասին փոխաբերությունները ձեզ ի՞նչ են ուսուցանում Փրկչի Երկրորդ Գալուստի մասին:

Կարդացեք Ա Թեսաղոնիկեցիս 5.4-6 հատվածները և փնտրեք, թե Պողոսն ինչ ճշմարտություններ էր ուսուցանում Երկրորդ Գալուստին պատրաստ լինելու մասին: Համեմատեք այս ուսմունքները Վարդապետություն և Ուխտեր 106.4--5 հատվածների հետ:

- Ի՞նչ գաղափարներ եք ձեռք բերել:

Պողոսի ուսմունքներից մենք կարող ենք սովորել հետևյալ ճշմարտությունը. **եթե մենք ձգտենք «լույսի զավակներ» լինել և հետևել Հիսուս Քրիստոսին, մենք պատրաստ կլինենք Նրա Երկրորդ Գալուստին**:

Եթե ցանկանում եք ավելի շատ բան իմանալ այն մասին, թե Տերն ինչպես է մեզ հրավիրում լույսի զավակներ դառնալ, կարդացեք 3 Նեփի 18.24, Վարդապետություն և Ուխտեր 50.23-25, 88.67-68 հատվածները: Ձեր օրագրում նշեք, թե ինչ եք գտել, որն օգնում է ձեզ հասկանալ, թե ինչպես լինել լույսի զավակ:

- Ինչպե՞ս եք Տիրոջ լույսը ձեր կյանք հրավիրում: Ինչպե՞ս կարող եք ավելի շատ Նրա լույսից ձեր կյանք հրավիրել:

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

© 2022 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. Տարբերակ. 2/21: *When Will the Second Coming of Jesus Christ Happen?*-ի թարգմանությունը. Armenian. PD60012661 201. Printed in the United States of America.